# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am


30.12.2017թ N

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
### ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

***Կոտայքի մարզի հարգարժա՛ն բնակիչներ***

Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ու անձամբ իմ կողմից ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ:

2017 թվականը հիմնականում ամփոփում ենք տարբեր ոլորտներում գրանցված դրական զարգացումներով և ձեռքբերումներով:

Անցնող տարվա ընթացքում, պետական համակողմանի աջակցության արդյունքում, բնականոն կերպով կյանքի են կոչվել մարզի զարգացման ռազմավարության դրույթները՝ դրական լիցքեր հաղորդելով մարզային ենթակառուցվածքների գործունեությանը, համայնքներում իրականացվող աշխատանքների արդիականացմանն ու կատարելագործմանը:

Այս ամենով հանդերձ պետք է նշենք նաև, որ արդեն իսկ մշակվել են հաջորդ տարվա համար նախատեսված ծրագրերը և իրականացվելիք նախաձեռնությունների հիմնական նպատակը լինելու է մարզային բոլոր գործընթացների արդյունավետ կազմակերպումը:

Ցանկանանք, որ 2018 թվականը լինի առաջընթացի, նպատակների և ցանկությունների իրականացման արգասաբեր տարի:

Լիահույս եմ, որ եկող տարին կդառնա նորանոր հաջողությունների յուրօրինակ խորհրդանիշ՝ հաստատուն տեղ ունենալով հայ ժողովրդի պատմության նշանակալի էջերի շարքում:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

***Հարգանքով՝***

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ